

մէկտեղ՝ որուն մէջ կը գտնուին, արդէն Վիկիական հանգանակին կը վերաբերին. մերինը յայտ՝ մասին ուրիշ բան չ'աւելցնելը՝ բայց եթէ հոգւոյն սրբոյ անունը:

Բայց մնացեալ պատճառները մեզի բաւական կերեւան զմեզ համոզելու որ հանգանակը չէ թէ մինակ Աթանասի ժամանակին կը վերաբերի, որուն վրայ տարակոյս իսկ չի կրնար ըլլալ, հապա նաեւ թէ նոյն իսկ Աթանասի դործն է: Իրօք սա հանգանակը կամ հաւատոյ դաւանութիւնը, ինչպէս որ վերնագիրը կ'ըսէ, հանգանակի «Մեկնութիւն», մըն է, եւ կրնայ իրաւամբ սա սուրբ Հօր զրուածոյ համառօտութիւնը կամ ուղիւժուծը համարուիլ զլիաւորաբար՝ նախ չորս թղթերուն՝ զորոնք առ Սերապիոն զրեց անապատէն (358ին) Փոփոխականաց դէմ, այս ինքն անոնց դէմ՝ որոնք Որդւոյն Աստուծոյ ճշմարիտ աստուածութիւնն ընդունելէն ետքը՝ Հոգւոյն սրբոյ աստուածութիւնը կ'ուրանային, զանիկայ Որդւոյ արարածը համարելով. երկրորդ՝ Ապողինարեանց դէմ զրաժ երկու զրքերուն, որոնց մէջ կը խօսի նաեւ անոնց դէմ որոնք կ'ըսեն թէ «Տէրն կարծեօք եւ ոչ եթէ ճշմարտապէս ունէր մարմին», երրորդ՝ առ Աղեղիիոս գրած թղթոյն:

Բայց ասիէ ծանօթ է որ սրբոյն Աթանասի սովորական է իր խօսքերը մէջ ընդ մէջ Վիկիական հանգանակին խօսքերուն հետ հիւսել: Հայ գրչադիրք պահած են մեզի ուրիշ յիշատակարան մ'ալ սա տեսակէն, որուն բնագիրը չկայ մէջ տեղ:

Վերն արդէն դիտեցինք որ երեք ձեւերուն միջինը՝ որն որ նոյն իսկ մեր հանգանակն է որուն համար կ'ըսենք թէ Աթանասի դործն է, զեռ. *անδρώνος* երկրորդ. *թեոս* դէմ ի Վրիստոս՝ խօսք մը չկայ: Եւ, սա ինչդիրն ետքէն ծագած ըլլալով, ստիպուեցաւ սուրբ Աթանաս ուրիշ հաւատոյ դաւանութիւն մը ուրոյն սա մոլորութեան դէմ *հուսկանանի* ձեռով զրել, որ է սա հետեւեալը, վերնագրով մը մէկտեղ՝ որն որ առանց տարակուսի յունականէն է:

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԱԹԱՆԱՍԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԵՊՈՍ (գուցէ պէտք է տեղեցնել ԱԳԵՓՈՍԿՐԻՍՏ)

ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ՅԱԴԱԿՍ ԱՏՏՈՒԵԾԱՅԻՆ ՄԱՐՄՆԱԲՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՆ ԶԱՅՆԱԳՅԵԼՈՎ,
ՍՐԲՈՑ ԺՈՂՈՎՈՅՆ Ի ՆԻԿԻԱ

Խոստովանիմք գորդին Աստուծոյ նախ քան զյախտեանս մշտնջենաբար ծնեալ ի հօրէ, իսկ առ վերջնովք յախտեանիքս վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ որ-